ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 580-Ա	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	22.05.2018
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	29.05.2018
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.05.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2018 թվականի N 580-Ա

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով և 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը՝

1) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ենթակա մարմին է՝

ա. Սոցիալական ապահովության ծառայությունը.

2) Արդարադատության նախարարությանը ենթակա մարմիններ են՝

ա. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը,

բ. Քրեակատարողական ծառայությունը,

գ. Պրոբացիայի ծառայությունը.

3) Արտակարգ իրավիճակների նախարարությանը ենթակա մարմին է՝

ա. Փրկարար ծառայությունը.

4) Արտաքին գործերի նախարարությանը ենթակա մարմին է՝

ա. Պետական արարողակարգի ծառայությունը.

5) Շրջակա միջավայրի նախարարությանը ենթակա մարմին է՝

ա. Անտառային կոմիտեն.

6) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.06.19 N 923-Ա)***

7) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ենթակա մարմիններ են՝

ա. Գիտության կոմիտեն,

բ. Բարձրագույն որակավորման կոմիտեն,

գ. Լեզվի կոմիտեն.

8) Պաշտպանության նախարարությանը ենթակա մարմիններ են՝

ա. ***(պարբերությունն ուժը կորցրել է 20.06.19 N 923-Ա)***

բ. Զինված ուժերի գլխավոր շտաբը.

9) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա մարմիններն են՝

ա. Միգրացիոն ծառայությունը,

բ. Ջրային կոմիտեն,

գ. Պետական գույքի կառավարման կոմիտեն,

դ. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն.

10) Էկոնոմիկայի նախարարությանը ենթակա մարմիններն են՝

ա. Զբոսաշրջության կոմիտեն.

բ. ***(պարբերությունն ուժը կորցրել է 20.06.19 N 923-Ա)***

11) Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ենթակա մարմիններն են՝

ա. Ռազմաարդյունաբերության կոմիտեն.

12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝

ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

(1-ին կետը փոփ., լրաց. 20.06.19 N 923-Ա)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2018 թ. մայիսի 29
Երևան